ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-008-18.08.2021-ՏՏԳԾ-011/1) ,

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1. մասով. «19.1. Ազդակիր բնակավայրը համայնքի այն բնակավայր(եր)ն է (են), որի (որոնց) վարչական տարածքում գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող կազմակերպությունը, որը գործունեություն է ծավալում լեռնահատկացմամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սահմանված տարածքում:»:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հոդվածը ներկայացնել նոր խմբագրությամբ՝ «Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել 5-9 մասերով՝ հետևյալ բովանդակությամբ «5՝ Պետական բյուջեի ծախսերում նախատեսվում է նաև համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով և կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի երկու տոկոսից (այսուհետ՝ համայնքային մասհանում): Սույն հոդվածի իմաստով ռոյալթի վճարող է համարվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ռոյալթի վճարողը: 6՝ Յուրաքանչյուր ռոյալթի վճարողի համայնքային մասհանումը բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով՝ համայնքային մասհանման 50 տոկոսը բաշխվում է համայնքի ազդակիր բնակավայր(եր)ի միջև հավասարաչափ, իսկ մյուս 50 տոկոսը հավասարաչափ բաշխվում է Հայաստանի Հանրապետության այն բոլոր համայնքների միջև, որոնց կազմում կան սույն օրենքի 1.2-րդ հոդվածի 19.1-րդ մասով սահմանված ազդակիր բնակավայր(եր)՝ այլ ռոյալթի վճարողներից, բացառելով սույն պարբերության առաջին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մասում նշված համայնքները: Մասհանումների չափերը որոշելիս հիմք է ընդունվում առաջիկա բյուջետային տարվան նախորդող երրորդ տարվա փաստացի վճարված ռոյալթիի գումարների առկա տվյալները: 7. Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար: 8. Համայնքներին բաշխված համայնքային մասհանումների մասով սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախագիծը և Ծրագրի փոփոխությունները մշակվում են համայնքի ղեկավարի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերը՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայրի զարգացման ծրագրերին: Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի համաձայնեցմանն են ներկայացվում համայնքի ղեկավարի կողմից: 9. Ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները, ինչպես նաև Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		
3 [illegible]	ՀՀ կառավարություն	Նախագծի 2- րդ հոդված	Օրենքի 28[1]-ին հոդվածում «համայնքներին բաշխվող համայնքների և ռոյալթիների մասհանումների» ձեևակերպումը փոխարինել «համայնքներին բաշխվող համայնքային մասհանումների» ձևակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լրացվող 3.1-ին մասի համարը տեքստից բաժանել միջակետով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	«և/կամ մարզի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ» ձևակերպումը փոխարինել «պաշտոնական կայքում: Վերջինիս բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հրապարակվում է համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում:»:	Ընդունվել է	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	2-րդ կետը ներկայացնել նոր խմբագրությամբ «2. Սույն օրենքն ընդունվելուց հետո Կառավարությունը հաստատում է՝ 1) համայնքներին բաշխված համայնքային մասհանումների մասով սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում նախատեսված միջոցառումների ուղղությունները և դրանց առաջնահերթությունները, ինչպես նաև Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը՝ վեցամսյա ժամկետում, 2) համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվության ձևաչափը՝ չորսամսյա ժամկետում:»	Ընդունվել է:	Ընդունվել է:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-008[1] -18.08.2021-ՏՏԳՇ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	«ԼՐԱՑՈՒՄ» բառն փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Հոդված 1՝ «Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել 4՝1 կետ հետևյալ բովանդակությամբ. «4՝1.համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունները՝»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	5՝1 կետը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ՝ «5՝1) հաստատում է համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը և վերահսկում դրանց իրականացումը՝»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4 □	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով□ «Հոդված 3□ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել 3□1 կետ հետևյալ բովանդակությամբ□ «3□1.տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը□»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5 □	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով□ «Հոդված 4□ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հետո հետո լրացնել 1□1 կետ հետևյալ բովանդակությամբ□ «1□1.կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները, ընթացիկ տարվա ծրագրի վերաբերյալ յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը□»:	Ընդունվել է:	Ընդունվել է: